ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 38/20
Շինարարության կապալի

ք. Կապան 03 հուլիսի 2020 թ.

<< ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի պետ Արմեն Ալբերտի Զաքարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և 2020 թվականի մարտի 30-ի << Գլխավոր հարկադիր կատարողի կողմից տրված N ԵԿ 2000 լիազորագրի հիման վրա մի կողմից, և Մատակարարը՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ, ի դեմս Սյունիքի ԳԳՄ տնօրեն Վահե Գառնիկի Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և 2019 թվականի դեկտեմբերի 30-ի N 01-38 / 5875 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի << ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ի դեմս Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունք պետի առաջադրանքով կատարել << Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների 2/2 հասցեում գտնվող, ծառայության սեփականությունը հանդիսացող տարածքի գազատարման համակարգը գազամատակարարման ցանցին միացման աշխատանքները, (Օբյեկտ), այն է՝ կատարել նախագծային և աշխատանքային փաստաթղթերով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև ցանկացած այլ աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են Օբյեկտի շինարարության և նշանակությանը համապատասխան դրա հետագա շահագործման համար, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար Պայմանագրով սահմանված կարգով և շահագործման ընդունել շինարարությամբ ավարտված Օբյեկտը: Նախագծային և աշխատանքային փաստաթղթերի կազմման պարտականությունը կրում է Պատվիրատուն:

1.2. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված նախագծային և աշխատանքային փաստաթղթերը համդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Աշխատանքի կատարման ընթացքում, ինչպես նաև արդյունքն ընդունելու ժամանակ Կապալառուից պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու հայտնաբերված թերությունները.

2.1.3. Եթե Աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվում, Կապալառուին հանձնարարել ողջամիտ ժամկետում վերացնելու թերությունները,

2.1.4. Աշխատանքը ընդունելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում Պատվիրատուի գույքին, Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձանց գույքին, կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում, կամ վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները և հատուցելու վնասները կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը և դրանց հետևանքով պատճառված վնասները՝ բացառությամբ համակարգի շահագործման պահանջները պահպանելու դեպքերի:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի 1.1. կետում նշված նախագծային և աշխատանքային փաստաթղթերը Կապալառուին տրամադրել սույն պայմանագիրը կնքելուց հետո 3-օրյա ժամկետում:

2.3. Կապալառուն իրավունք ունի Օբյեկտը հանձնել սույն պայմանագրով սահմանված ժամկետից շուտ:

2.4. Կապալառուն պարտավոր է

2.4.1. ապահովել Աշխատանքի կատարումը պատշաճ որակով՝ նորմատիվ իրավական ակտերի, նախագծային և աշխատանքային փաստաթղթերի պահանջներին և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.4.2 Օբյեկտը հանձնել Պատվիրատուին սույն պայմանագրով սահմանված ժամկետում,

2.4.3. Օբյեկտը հանձնելուց հետո, երաշխիքային ժամկետում՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, Պատվիրատուի գույքին, Պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ անձանց գույքին, կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում, կամ վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերվելու դեպքում, անհատույց վերացնել այդ թերությունները և հատուցել վնասները կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը և դրանց հետևանքով պատճառված վնասները՝ բացառությամբ համակարգի շահագործման պահանջները պահպանելու դեպքերի:

3.Աշխատանքի գինը և վճարման կարգը

3.1. Օբյեկտի շինարարության համար Կապալառուի Աշխատանքների Գինը համաձայն նախահաշվի կազմում է 170906 /մեկ հարյուր յոթանասուն հազար ինն հարյուր վեց/ << դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Աշխատանքների Գինը իր մեջ ներառում է նախագծային փաստաթղթերում նշված կապալային աշխատանքների, ինչպես նաև ցանկացած այլ աշխատանքների արժեքը, որոնք անհրաժեշտ են Օբյեկտի շինարարության և դրա բնականոն շահագործման հանձնման համար, նյութերի արժեքը (բացառությամբ սույն պայմանագրի 3.2. կետում նշված նյութերի արժեքի), ինչպես նաև հաշվի է առնում Կապալառուի բոլոր հնարավոր ծախսերը, ներառյալ /սակայն չսահմանափակվելով/ Պայմանագրի 3.5-րդ կետով նախատեսված ծախսերը, ինչպես նաև ԱԱՀ-ի գումարը:

3.2. Պատվիրատուն կարող է տրամադրել Կապալառուին սույն պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութեր առանց դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման:

3.3. Պատվիրատուն վճարում է կանխավճար՝ Աշխատանքների գնի 80 %. չափով՝ 136725 /մեկ հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր քսանհինգ/ << դրամ, իսկ փաստացի կատարված Աշխատանքների համար Կապալառուին վարձատրում է կատարողական ակտերը ստորագրելուց և Կապալառուի կողմից հաշվարկային փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 /երեսուն/ բանկային օրվա ընթացքում, անկանխիկ ձևով բանկային փոխանցմամբ:

3.4. Ընդունված Օբյեկտի համար վերջնական վճարումը Պատվիրատուն կատարում է Օբյեկտի հանձնման-ընդունման ավարտական ակտն ստորագրելուց հետո Կապալառուի կողմից հաշվարկային փաստաթուղթը ներկայացնելու օրվանից հաշված 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ ձևով՝ բանկային փոխանցմամբ:

3.5. Կապալառուի ծախսերը՝

Աշխատանքների Գնի կազմում հաշվի են առնվում Կապալառուի բոլոր հնարավոր ծախսերը, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, հետևյալ ծախսերով՝

- շինհրապարակման աշխատանքների վրա կատարվող ծախսերը՝ հաշվի առնելով նյութերի, արտադրանքի և կառույցների գինը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից մատակարարվող սարքավորումների հավաքակցման աշխատանքների ծախսերը;
- տրանսպորտապահեստային լոգիստիկ ծախսերը /նյութատեխնիկական պաշարների արժեքի ձևավորման ժամանակ, ներառյալ՝ Կենտրոնացված մատակարարի անվանակարգի նյութերը/;
- Նախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով նախագծային աշխատանքների վրա կատարվող ծախսերը /անհրաժեշտության դեպքում/;
- ժամանակավոր շենքերով և շինություններով ծանրաբեռնված հողամասերի հատկացման փաստաթղթերի ձևակերպման, նյութատեխնիկական պաշարների ընդունման հարթակների /այդ թվում՝ երկաթգծի փակուղիների և կառամատույցների շինարարությունը, վերանորոգումը, վերակառուցումը/, նյութական պաշարների վերամշակումը և պահեստավորումը այն ծավալներով, որոնք ապահովում են նախագծի իրականացումը /ներառյալ՝ խոշոր տրամագծով խողովակները, ձևային ապրանքները, մալուխահաղորդիչային արտադրանքը և այլ նյութեր/
- ծախսեր, որոնք կապված են Կապալառուների /ենթակապալառուների/ մեկ շինությունից այլ շինություն վերատեղակայման հետ, ներառյալ՝ շինարարական տեխնիկայի վերատեղակայումը;
- մշտական գործող ավտոմայրուղիների պահպանման և շինարարության ավարտից հետո դրանց վերականգնման ծախսերը;
- տեղափոխման պայմաններին տրանսպորտային միջոցների հարմարեցման, հատուկ հանգույցների կազմակերպման, կամուրջների ամրապնդման, ճանապարհների հարթեցման, խանգարող շինությունների տեղափոխման ծախսերը;
- սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան բանկային երաշխիքների վճարման ծախսերը;
- Օբյեկտի ապահովագրության համար Կապալառուների /ենթակապալառուների/ ծախսերը՝ կապված շինարարական ռիսկերի և գույքի կամավոր ապահովագրության հետ;
- սղաճային ռիսկերի հետ կապված ծախսերը;

- ԱԱՀ վճարման հետ կապված ծախսերը;
- թույլատրելի նորմատիվների և սահմանված չափաքանակների /արտանետումների ժամանակավոր համաձայնեցված նորմատիվների/ սահմաններում շրջակա միջավայր աղտոտող նյութերի արտանետման համար վճարվող ծախսեր;
- արտանետումների թույլատրելի նորմատիվների և սահմանված չափաքանակների /արտանետումների ժամանակավոր համաձայնեցված նորմատիվների/ սահմաններում աղտոտող նյութեր ջրային օբյեկտներ և տեղանք արտանետման վճարների ծախսերը;
- սահմանված չափաքանակների սահմաններում արտադրության և սպառման թափոնների տեղակայման ծախսերը;
- ժամանակավոր կառույցների կառուցման հետ կապված ծախսեր;
- շինարարների տեղակայման և սպասարկման համար անհրաժեշտ ժամանակավոր շենքերի և շինությունների կառուցման համար ծախսերը;
- շինհրապարակի տարածքից դուրս գտնվող ժամանակավոր ճանապարհների, այդ թվում հողատեղափոխման, կառուցման ծախսերը;
- շինհրապարակը հոսանքով, ջրով, ջեռուցմամբ և այլնով ապահովելու նպատակով միացման աղբյուրից մինչև շինհրապարակում գտնվող բաժանիչ սարքավորումներ հասցնելու նպատակով շինարարության ծախսեր;
- մայրուղային գծային ենթակառուցվածքների ընդհանուր ցանցի շինարարության ժամանակ շինարարական տարածքի նախնական յուրացման նպատակով մայրուղուն /մայրուղուն կից ճանապարհին/ զուգահեռ ժամանակավոր ճանապարհի բարեկարգման ծախսերը;
- գծային ենթակառուցվածքների շինարարության ժամանակ՝ շինարարական հումքի մոտեցումն ապահովելու նպատակով՝ այն դեպքերում, երբ արհեստական ենթակառուցվածքների շինարարությունը՝ կամուրջների, ուղեկամուրջների, թունելների և այլն, իրականացվում է մինչև մայրուղու վրա աշխատանքները սկսելը, ժամանակավոր անհրաժեշտ մոտեցման ուղիների շինարարությանն համար ծախսերը;
- ծմեռային ժամանակաշրջանում շինհավաքակցման /շինվերանորոգման/ աշխատանքների իրականացման լրացուցիչ ծախսերը;
- ավտոմեքենայով և/կամ այլ փոխադրամիջոցով Կապալառուի /ենթակապալառու/ աշխատողների տեղափոխման ծախսերը կամ քաղաքային տրանսպորտի հատուկ երթուղիների կազմակերպման ծախսերի փոխհատուցումը;
- հերթափոխային եղանակով աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը /բացառությամբ անհատական նախահաշիվներում հաշվի առնվող հաստիքային դրույքաչափին ավելացվող հերթափոխային լրավճարների/;
- աշխատողների շինհավաքակցման և հատուկ շինարարական աշխատանքների իրականացման նպատակով գործուղման հետ կապված ծախսերը;
- նորմալ աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումների անցկացման ծախսերը;
- մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար Կապալառուի կողմից վճարման ենթակա մաքսային տուրքերը;
- Օբյեկտի շինարարության և շահագործման հանձնելու համար անհրաժեշտ ցանկացած չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պահուստային միջոցները:

3.6 Հանգամանքների, որոնցից ելել էին Կողմերը Պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք չի հանդիսանում սույն Պայմանագրով Աշխատանքների Գնի վերանայման համար:

4. Պայմանագրի գնի փոփոխություն

4.1. Աշխատանքների ծավալի նվազեցում

Պատվիրատուն իրավունք ունի պահանջել նվազեցնել Աշխատանքների Գինը Աշխատանքների ծավալի նվազման դեպքում, որը ի հայտ է եկել ինչպես շինարարության ընթացքում, այնպես էլ մինչև դրա սկիզբը: Նախագծային և Նախահաշվային փաստաթղթերից հանված, այդ կապակցությամբ սույն Պայմանագրի շրջանակներում կատարման ոչ ենթակա աշխատանքների ցանկը, ինչպես նաև Աշխատանքների Գնի նվազեցման չափը որոշվում է Պատվիրատուի կողմից միակողմանիորեն, ինչի վերաբերյալ տրվում է Պատվիրատուի կամ Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից ստորագրված ծանուցում: Աշխատանքների Գինը և աշխատանքների ծավալը համարվում են փոփոխված նախագծային և նախահաշվային փաստաթղթերում Պատվիրատուի կողմից հաստատված փոփոխությունների մասին Կապալառուին պատշաճ ծանուցելու պահից:

Կատարման ենթակա Աշխատանքների ծավալի և Աշխատանքների Գնի նվազեցման հետ Կապալառուի անհամաձայնության դեպքում, Կապալառուն իրավունք ունի դատական կարգով պահանջել Աշխատանքների Գնի անհիմն նվազեցմամբ պատճառված վնասների հատուցում: Ընդ որում, Կապալառուի պարտականությունները, կապված Նախագծային փաստաթղթերից և Նախահաշվային փաստաթղթերից չհանված այլ աշխատանքների կատարման հետ, պահպանվում են ամբողջ ծավալով՝ անկախ աշխատանքների ծավալի նվազեցման հետ Կապալառուի անհամաձայնությունից:

4.2. Պատվիրատուի կողմից Նախագծային փաստաթղթերում միակողմանիորեն փոփոխություններ մտցնելը

Պատվիրատուն իրավունք ունի ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 742 հոդվածի 1-ին մասի համաձայն նախագծային փաստաթղթերի մեջ կատարել փոփոխություններ, որոնք նախատեսում են Աշխատանքների Գնի 10 տոկոսը չգերազանցող լրացուցիչ աշխատանքներ: Այդ դեպքում Պատվիրատուն Կապալառուին ուղղում է համապատասխան ցուցումներ: Սույն կետում նշված լրացուցիչ աշխատանքների իրականացումը չի հանգեցնում սույն Պայմանագրի կայուն գնի ավելացման և, հետևաբար, Պատվիրատուի վրա լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չի դնում: Նախագծային փաստաթղթերի մեջ Աշխատանքների Գնի 10 տոկոսը գերազանցող լրացուցիչ աշխատանքներ նախատեսող փոփոխությունների ներառումը իրականացվում է Կողմերի միջև համաձայնեցված լրացուցիչ նախահաշվի հիման վրա: Եթե Կապալառուն վստահ չէ լրացուցիչ Նախահաշվի վերաբերյալ Պատվիրատուի համաձայնության առկայության մեջ, ապա զրկվում է դրանում նշված լրացուցիչ աշխատանքների կատարման համար վարձատրության իրավունքից:

4.3. Նախահաշվի վերանայման Կապալառուի պահանջը

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ առանձին տեսակի աշխատանքների կամ առանձին տեսակի նյութերի /աշխատանքի/նյութի միավորի/ ընդհանուր գնի ցանկացած ավելացում առավել քան այդպիսի նյութերի և աշխատանքների համար /աշխատանքի/նյութի միավորի համար/ Նախահաշվային փաստաթղթերում սահմանված արժեքի 10 տոկոսը պետք է Կողմերի միջև համաձայնեցվի յուրաքանչյուր ավելացման դեպքում: Ընդ որում, Կապալառուն պարտավոր է մինչև համապատասխան աշխատանքների կատարումը կամ նյութերի ձեռքբերումը հիմնավորված հարցում ուղղել Պատվիրատուի պատասխանատու անձին՝ կցելով աշխատանքների /նյութերի միավորի արժեքը հաստատող և աշխատանքների և /կամ նյութերի /աշխատանքների/ նյութերի միավորի/ արժեքի ավելացումը հիմնավորող փաստաթղթեր և ստանալ Պատվիրատուի պատասխանատու անձի գրավոր համաձայնությունը նման աշխատանքներ կատարելու կամ նյութեր ձեռք բերելու համար: Սույն կետով նախատեսված համաձայնեցման ընթացակարգի չպահպանման դեպքում Կապալառուն զրկվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 707-րդ և 742-րդ հոդվածների հիման վրա Նախահաշվային փաստաթղթերի վերանայման պահանջի իրավունքից:

4.4. Պայմանագրի գնի փոփոխությունը շինարարության ժամկետների երկարաձգման դեպքում

Այն դեպքում, երբ Կողմերը որոշում կընդունեն Օբյեկտի շինարարության ժամկետը առավել քան մեկ օրացուցային տարով երկարաձգելու վերաբերյալ, Կապալառուի Աշխատանքների Գինը ենթակա է ինդեքսավորման տարեկան դեֆլյատորների կիրառմամբ, որոնք հրապարակվում են ՀՀ Ֆինանսների նախարարության կայքում մակրոտնտեսական ցուցանիշների կազմում: Շինարարության ժամկետների երկարաձգման և Աշխատանքների Գնի ավելացման մասին որոշումն ընդունվում է կողմերի կողմից լրացուցիչ համաձայնագրի կնքման եղանակով: Շինարարության ժամկետները մեկ օրացուցային տարուց պակաս ժամկետով երկարաձգելու դեպքում, Աշխատանքների Գինը վերանայման ենթակա չէ:

4.5.Կապալառուի Տնտեսումը

Կապալառուի Տնտեսման առկայության դեպքում Կապալառուն պարտավոր է մինչև հանձնման-ընդունման ակտի /ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով/ ձևակերպմանը հաջորդող ամսվա առաջին օրը Պատվիրատուին ներկայացնել Տնտեսման հաշվարկը: Կապալառուի Տնտեսման գումարը Կողմերի միջև բաշխվում է հավասարաչափ՝ լրացուցիչ համաձայնագրի հիման վրա:

4.6. Շինարարության արժեքի փոփոխումը առավել քան 10 տոկոսով՝

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ եթե քաղաքացիական օրենսդրության իմպերատիվ նորմերի համաձայն Կապալառուի Աշխատանքների կայուն Գինը ենթակա լինի ավելացման Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ, Պատվիրատուն պարտավոր է Աշխատանքների Գնի նշված ավելացումը վճարել միայն այն մասով, որը գերազանցում է Աշխատանքների Գնի 10 տոկոսը:

5. Պատվիրատուի հսկողությունը շինարարության նկատմամբ

5.1. Պատվիրատուի Պատասխանատու անձ՝

Պայմանագրի կնքման պահից /5/ օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն Կապալառուին ծանուցում է **Պատվիրատուի Պատասխանատու անձի** նշանակման մասին: **Պատվիրատուի Պատասխանատու անձը** շինարարության ընթացքում.

5.1.1. իրականացնում է հսկողություն շինարարության ընթացքի նկատմամբ՝ նպատակ ունենալով ապահովելու **Օբյեկտի** շինարարության ընթացքում կատարվող աշխատանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, նախագծային և աշխատանքային փաստաթղթերի պահանջներին, հողամասի քաղաքաշինական հատակագծերի պահանջներին շինարարության սկզբից մինչև շինարարությամբ ավարտված **Օբյեկտը** հանձնաժողովի կողմից ընդունման Ակտով նախագծային փաստաթղթերի համաձայն շահագործման հանձնումը;

5.1.2. ապահովում է արտադրական վճարումների ռեեստրի կամ վճարային և այլ փաստաթղթերի պատճենների ստացումը Կապալառուից;

5.1.3. կազմակերպում է ներգրավվող ենթակապալառուների և նյութերի մատակարարների վերաբերյալ Կապալառուի կողմից տրամադրվող տեղեկատվության ստուգումը;

5.1.4. անհրաժեշտության դեպքում համաձայնություն է տալիս Պայմանագրով նախատեսված լրացուցիչ աշխատանքների իրականացման համար;

5.1.5. իրականացնում է սույն **Պայամանագրով** նախատեսված այլ լիազորություններ:

Կապալառուն պետք է ծանուցվի **Պատվիրատուի Պատասխանատու անձի** փոփոխության մասին՝ **Պատվիրատուի Պատասխանատու անձի** նշանակման մասին ծանուցման համար սահմանված կարգով: Նման ծանուցումից հետո՝ մինչև համապատասխան փոփոխությունը, **Պատվիրատուն** պատասխանատվություն չի կրում **Պատվիրատուի Պատասխանատու անձի** գործառույթներ իրականացնող անձի գործողությունների համար:

5.1.6. **Պատասխանատու անձը** իրավասու է սույն **Պայմանագրով** նախատեսված պարտավորությունների իրականացման նպատակով, Նախահաշվային փաստաթղթերով նախատեսված սահմաններում, լրացուցիչ աշխատանքների կատարման ծավալները համաձայնեցնել, ինչպես նաև ներգրավվող ենթակապալառուների և մատակարարների վերաբերյալ հավանություն տալ միայն **Պատվիրատուի** կողմից տրված լիազորագրի հիման վրա:

5.2. Դրամական միջոցների ծախսման նկատմամբ հսկողության միջոցառումներ՝

Յուրաքանչյուր ամսվա /25/-ից ոչ ուշ **Կապալառուն Պատվիրատուին** է ուղարկում կատարված վճարումների ռեեստր ինչպես նաև, **Պատվիրատուից** հարցում ստանալու դեպքում, վճարային և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են սույն **Պայմանագրով** նախատեսված դրամական միջոցների ծախսումը: **Կապալառուն** նշված փաստաթղթերը **Պատվիրատուի Պատասխանատու անձին** փոխանցում է ակտով:

Այն դեպքում երբ սույն պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքի կատարման ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը **Կապալառուն** պարտավորվոր է աշխատանքի արդյունքը **Պատվիրատուին** հանձնելու պահին տրամադրել **Պատվիրատուին** վճարային և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են սույն **Պայմանագրով** նախատեսված դրամական միջոցների ծախսումը:

Պատվիրատուի Պատասխանատու անձը, ինչպես նաև **Պատվիրատուն**, իրավասու են սույն **Պայմանագրի** գործողության ցանկացած ժամանակ **Կապալառուից** պահանջել ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է **Պայմանագրի** կատարմանը: **Կապալառուն** պարտավոր է **Պատվիրատուի** և /կամ/ **Պատվիրատուի Պատասխանատու անձի** հարցմանը պատասխանել ոչ ուշ, քան այն ստանալուց հետո /5/ աշխատանքային օրվա ընթացքում: Պահանջվող տեղեկատվությանն տրամադրման անհնարինության դեպքում Կապալառուն պարտավոր է նույն ժամկետում տրամադրել հիմնավորված մերժում:

5.3. Ենթակապալառուների և նյութերի մատակարարների հետ պայմանագրում աշխատանքի գնի վերաբերյալ պայմաններ /եթե Կապալառուն իրավասու է ներգրավել ենթակապալառուների և/կամ նյութերի մատակարարների առանց մրցույթի անցկացման/

Ենթակապալառուի կամ մատակարարի հետ կնքված պայմանագրում աշխատանքների կամ նյութերի գինը չպետք է գերազանցի Նախահաշվային փաստաթղթերում նշված համապատասխան աշխատանքների և նյութերի արժեքը: Սույն դրույթի չպահպանման դեպքում Կապալառուն հատուցում է Նախահաշվային փաստաթղթերում նշված աշխատանքների կամ նյութերի արժեքի և փաստացի կատարված աշխատանքների կամ նյութերի արժեքի տարբերությունը:

Աշխատանքների և նյութերի արժեքների քանկացման կապակցությամբ առաջացած Կապալառուի՝ փոխհատուցման պարտավորության առաջացման դեպքում **Պատվիրատուն** իրավասու է փոխհատուցման նշված գումարը հաշվանցել **Կապալառուին** ըստ սույն **Պայմանագրով** վճարվելիք գումարի:

Բացառիկ դեպքերում **Կապալառուն** իրավասու է աշխատանքների կատարմանը ներգրավել կամ նյութեր ձեռք բերել **Պայմանագրում** չնշված անձանցից պահպանելով **Պայմանագրի** 5.4. կետով սահմանված կարգը:

5.4. Ենթակապալառուների և նյութեր մատակարարների ներգրավումը

Կապալառուն իրավունք ունի Պայմանագրի կատարման ընթացքում ներգրավել ենթակապալառուների, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար մատակարարներից ձեռք բերել նյութեր, միայն ներգրավվող անձանց Պատվիրատուի հետ հետևյալ կարգով համաձայնեցնելու դեպքում՝

5.4.1. Կապալառուն Պատվիրատուի Պատասխանատու անձին է ուղարկում գրություն՝ պայմանագրի կնքման և շինարարության մեջ ենթակապալառուի /մատակարարից նյութերի ձեռքբերման/ ներգրավման համաձայնություն ստանալու մասին, որտեղ նշում է ներգրավվող անձի անվանումը, ինչպես նաև կցում է նրա հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը և հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝ նոտարական վավերացմամբ իրավաբանական անձի գրանցման վկայականի, հարկ վճարողի հաշվառման համարի, կանոնադրության, միանձնյա գործադիր մարմին նշանակելու վերաբերյալ արձանագրության /որոշման/ պատճենները, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական ռեգիստրից քաղվածքի բնօրինակը, որը պետք է տրված լինի ոչ ուշ, քան Պատվիրատուին այն հանձնելուց 15 օր առաջ, վերջին հաշվետու ամսաթվի և նախորդ երկու տարիների հաշվապահական հաշվեկշիռը:

5.4.2. Պատվիրատուի Պատասխանատու անձը /5/ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ներկայացված փաստաթղթերի ստուգումը: Ստուգման արդյունքների հիման վրա Պատվիրատուի Պատասխանատու անձը որոշում է կայացնում որպես ենթակապալառու կամ նյութերի մատակարար անձի ներգրավման կամ ներգրավման մերժման մասին: Պատվիրատուի Պատասխանատու անձը իրավասու է նաև Կապալառուից պահանջել ներկայացնելու լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր և սույն ենթակետում նշված որոշումները կայացնել միայն իր հարցման պատասխանը ստանալուց հետո:

5.4.3. կայացված որոշման մասին Պատվիրատուի Պատասխանատու անձը Կապալառուին տեղեկացնում է ոչ ուշ, քան համապատասխան որոշում կայացնելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

Պատվիրատուի կողմից ենթակապալառուի կամ նյութերի մատակարարի ներգրավման համաձայնություն տալը Կապալառուին չի ազատում ենթակապալառուի կամ նյութերի մատակարարի գործողությունների համար պատասխանատվությունից:

6. Պատվիրատուի շահերի պաշտպանությունը, կողմերի պատասխանատվությունը, վեճերի լուծումը

6.1. Վեճերի լուծման կարգը

Սույն Պայմանագրից կամ սույն Պայմանագրի կապակցությամբ ծագող վեճերը և տարաձայնությունները, հնարավորության սահմաններում, պետք է կարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Կողմերը նախատեսում են վեճերի կարգավորման պարտադիր միջնորդական կարգ՝ նախապահանջների ուղարկման միջոցով: Պահանջը ձևակերպվում է գրավոր և ուղարկվում է այն Կողմին, որը թույլ է տվել սույն Պայմանագրի պայմանների խախտում: Պահանջում թվարկվում են խախտումները՝ հղում կատարելով Պայմանագրի համապատասխան դրույթներին, ինչպես նաև նշվում են գործողությունները, որոնք Կողմը պետք է կատարի խախտման վերացման համար: Պահանջի քննարկման ժամկետը չի կարող գերազանցել պահանջը ուղարկելուց 15 /տասնհինգ/ աշխատանքային օրը:

Բանակցությունների միջոցով համաձայնության չհասնելու դեպքում բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները, որոնք առաջանում են սույն Պայմանագրից կամ դրա կապակցությամբ, այդ թվում դրա կատարմանը, խախտմանը, դադարմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են քննության դատական կարգով:

7. Պայմանագրի լուծումը

7.1. Պայմանագրի կատարումից միակողմանիորեն հրաժարվելը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածով սահմանված կարգով.

Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից և պահանջել Պայմանագրով վճարված բոլոր դրամական միջոցների և տրամադրված նյութերի վերադարձ Պատվիրատուի կողմից նշված վայր, եթե շինարարության ընթացքում ակնհայտ է դարձել, որ աշխատանքները ժամանակին չեն կատարվի /աշխատանքների որևէ փուլի կատարման կետանցը կազմում է /30/ օրացուցային օրից ավել/ կամ կկատարվեն ոչ պատշաճ ձևով, և Կապալառուն Պատվիրատուի պահանջով և նրա կողմից սահմանված ժամկետում չի վերացնի թերությունները:

Այս դեպքում Կապալառուն պարտավոր է նաև Պատվիրատուին հատուցել Պայմանագրի վաղաժամկետ լուծմամբ պատճառված վնասները, այդ թվում՝ բաց թողնված օգուտը և վերադարձնել Պատվիրատուից ստացված նյութերը:

7.2. Պայմանագրից միակողմանի հրաժարվելը աշխատանքների կատարման մեջ չհամաձայնեցված ենթակապալառուների ներգրավելու կամ չհամաձայնեցված մատակարարից նյութերի ձեռքբերման դեպքում.

Պատվիրատուն իրավունք ունի տուժանքի վճարման պահանջի փոխարեն միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից և պահանջել Պայմանագրով վճարված բոլոր դրամական միջոցների վերադարձ, վնասների հատուցում և տրամադրված նյութերի վերադարձ Պատվիրատուի կողմից նշված վայր, եթե Պատվիրատուին հայտնի դառնա, որ Կապալառուն շինարարության մեջ ներգրավել է ենթակապալառուների կամ նյութերի մատակարարների սույն Պայմանագրով սահմանված կարգի խախտմամբ:

7.3. Պայմանագրից միակողմ հրաժարվելը Կապալառուի կողմից պայմանագրի էական խախտման դեպքում.

Պատվիրատուն իրավատու է միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի կատարումից և պահանջել Պայմանագրին համապատասխան վճարված բոլոր դրամական միջոցների վերադարձ, վնասների հատուցում և տրամադրված նյութերի վերադարձ Պատվիրատուի կողմից նշված վայր, Կապալառուին պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին գրավոր ծանուցում ուղղելու միջոցով, եթե Կապալառուն չի կատարում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները:

7.4. Պայմանագրից միակողմ հրաժարվելը Կապալառուի Պայմանագրի 9.1. կետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում.

Կապալառուի կողմից Պայմանագրի 9.1. կետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի կարգով հրաժարվել պայմանագրի կատարումից: Այդ դեպքում սույն պայմանագիրը կհամարվի լուծված Պատվիրատուի կողմից պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին Կապալառուի համապատասխան ծանուցումը ստանալու օրից կամ այլ ժամկետից, որը նշված կլինի այդ ծանուցման մեջ: Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պարտավորվում են կազմել փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ արձանագրելով սույն պայմանագրի լուծման պահի դրությամբ կատարված փոխադարձ պարտավորությունների չափը, կատարված պարտավորությունների չափին համապատասխան (դրանց դիմաց) չկատարված պարտավորության չափը, Կապալառուի կողմից Պատվիրատուի տրամադրած Պայմանագրի կատարման շրջանակներում չծախսված նյութերի քանակը և սահմանելով այդ չկատարված պարտավորության կատարման, տրամադրված նյութերի վերադարձի եղանակն ու ժամկետը:

7.5. Պայմանագրով վճարված դրամական միջոցների վերադարձը.

Պատվիրատուի կողմից Պայամանագրից հրաժարվելու դեպքում Կապալառուն պարտավոր է /5/ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին վերադարձնել նրանից որպես մասնակի վճարում /կանխավճար/ ստացված դրամական միջոցները, դրանից պահելով Կապալառուի կողմից փաստացի կատարված և հանձնման-ընդունման ակտով Պատվիրատուի կողմից ընդունված աշխատանքների արժեքը: Պայմանագրով վճարված դրամական միջոցների վերադարձնելն ուշացնելու դեպքում Կապալառուն, ուրիշի դրամական միջոցներն օգտագործելու համար Պատվիրատուին վճարում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տոկոսները:

8. Աշխատանքի կատարման ժամկետը և Օբյեկտի հանձնման կարգը

8.1. Օբյեկտի հանձնման վերջնաժամկետը սահմանվում է 31-ը օգոստոսի 2020 թ.:

8.2. Կապալառուի կողմից Օբյեկտը համարվում է հանձնված, եթե Օբյեկտը հանձնման-ընդունման ակտով ընդունվում է Պատվիրատուի կողմից:

8.3. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված աշխատանքի արդյունքը կարող է հանձնվել ըստ առանձին փուլերի համաձայն Կողմերի կողմից հաստատված աշխատանքների կատարման ժամանակացույցի:

8.4. Մինչև Օբյեկտի հանձնում-ընդունումը Կապալառուն Պատվիրատուի նշված վայր է վերադարձնում Պատվիրատուից ստացված և նպատակային նշանակությամբ չօգտագործված նյութերը:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Կապալառուի սեփականատերերի, ներառյալ շահառուների (այդ թվում՝ վերջնական) շրջանում և/կամ Կապալառուի գործադիր մարմինների փոփոխության դեպքում Կապալառուն այդ փոփոխությունից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի էլեկտրոնային

հասցեով ներկայացնում է տեղեկատվություն փոփոխության մասին՝ հավաստելով համապատասխան փաստաթղթերով:

9.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ավարտվում է Կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ կատարմամբ:

9.3. Սույն պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.4. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կապալառու՝
ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Կապան-Մեղրի բաժանմունք	Սյունիքի ԳԳՄ
ՀՀ ՖՆ գործառնական կարգություն	ք. Կապան Գործարանային 16
հ/հ 900011288025	«Արդշինբանկ» ՓԲԸ, «Կապան» մ/ճ
ՀԿՀՀ 01223338	հ/հ 2470802008650000
	ՀԿՀՀ 00046317
Բաժանմունքի պետ՝ Ա. Զաքարյան	Տնօրեն՝ [illegible]

Հաստատում եմ՝
<<Զանգեզուրը Արմենիա>> ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ տնօրեն
_____ Կ. Հակոբյան
"____" _____ 2020 թ.

Հաստատում եմ՝
ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի պետ
_____ Ա. Զաքարյան
"____" _____ 2020 թ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն Ա Կ Տ

ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Սյունիքի մարզային բաժնի,
Կապան-Մեղրի բաժանմունքի, Կապան քաղաքի Երկաթուղայինների 2 / 2 հասցեում գտնվող գրասենյակի
գազաֆիկացման համակարգի կառուցման
Պայմանագիր N 38 / 20, 03.07. 2020թ.

"____" "_____" 2020 թ.

ՀՀ	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Հիմնական աշխատավարձ		Մեքենամեխ. շահագործում		Նյութեր		Ընդամենը /դրամ/
					Միավորի արժեքը /դրամ/	Ընդամենը /դրամ/	Միավորի արժեքը /դրամ/	Ընդամենը /դրամ/	Նյութերի միավորի արժեքը /դրամ/	Նյութերի ընդհանուր արժեքը /դրամ/	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	16-50	*Մետաղական խողովակների տեղադրում պատերին ամրացումով d = 20x2.5 մմ*	գծմ	42	515.0	21630.0	59.1	2482.2		35975.1	60087.3
		Խողովակ պողպատյա ջրագազատար d=20x2.5 մմ	գծմ	42.0					655.13	27515.4	
		Թթվածին	խմ	0.056					884.80	2081.05	
		Կարբիդ	կգ	0.23					580.97	5612.18	

		Զոդալար	կգ	0.0165					1106.00	766.46	
2	16-130	Խցանային փականի տեղադրում D=15 մմ	հատ	1	2349.4	2349.4	384.1	384.1		695.49	3429.0
		Խցանային փական D=15 մմ	հատ	1					655.86	655.86	
		Խծուծ	կգ	0.01					3963.16	39.6	
3	19-73	*Գազատարի փորձարկում*	գծմ	42.0	543.0	22806.0				0.6	22806.6
		Օճառ	կգ	0.0025					221.2	0.553	
4	15-613	*Գազատարի և հենարանների յուղաներկում 2 անգամ*	100 քմ	0.03956	60370.0	2388.5	88.6	350.5		1875.8	4614.8
		Լուծիչ	լ	0.6					903.24	541.9	
		Ներկ արծաթամոխրագույն	կգ	1.072					1244.3	1333.8	
5	24-348 ժող. 30 աղ. 59	Պողպատե խողովակների միացում գործող գազատարին Dպ=20 մմ	հատ	1	2785.0	2785.0	4372.8	4372.8		336.82	7494.6
		Խողովակ Dպ=20 մմ	գծմ	0.23					655.1	150.68	
		Թթվածին	խմ	0.046					884.80	40.70	
		Կարբիդ	կգ	0.178					580.97	103.41	
		Զոդալար	կգ	0.038					1106.00	42.03	
6	19-41	Գազակարգավորիչի տեղադրում մինչև D=50մմ, Q=5 խ.մ.	հատ	1	6645	6645.0	2511.4	2511.4		35.8	9192.2
		Խծուծ	կգ	0.01					3583.33	35.8	
7	16-50	G-6 գազհաշվիչի միացում գազատարին d = 20 մմ խողովակով	հատ	1	515	515.0	59.1	59.1		336.8	910.9
		Խողովակ d = 20 մմ	գմ	0.23					655.1	150.7	
		Թթվածին	խմ	0.046					884.80	40.7	
		Կարբիդ	կգ	0.178					580.97	103.4	
		Զոդալար	կգ	0.038					1106.00	42.0	

8	22-362	Չնավոր մասեր	կգ	3	475.0	1425.0	478.6	1435.9		1327.2	4188.1
		Ամրան	կգ	3					442.4	1327.2	
9	25-392	Գազատարի փչամաքրում	կմ	0.042	12448.0	522.8					522.8
10		Նյութեր՝ Վառելիք									
		Սեղմած գազ	կգ								
11		Ընդամենը				61066.7		11596.1		40583.6	113246.3
		Վերադիր ծախսեր 13.3%									15061.8
		Ընդամենը									128308.1
		Շահույթ 11%									14113.9
		Ընդամենը									142421.9
		ԱԱՀ 20%									28484.4
12		Ընդամենը									170906.33

Հանձնեց
<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ ԿԿԾ պետ

Ա. Գևորգյան

Ընդունեց
Բաժանմունքի պետ

Ա. Զաքարյան

ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 39/20

(Բացառությամբ շինարարական կապալի)

ք. Կապան *03 հուլիսի 2020 թ.*

<< ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ի դեմս Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի պետ Արմեն Ալբերտի Զաքարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և 2020 թվականի մարտի 30-ի << Գլխավոր հարկադիր կատարողի կողմից տրված N ԵԿ 2000 լիազորագրի հիման վրա մի կողմից, և Մատակարարը` <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ, ի դեմս Սյունիքի ԳԳՄ տնօրեն Վաչե Գառնիկի Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության և 2019 թվականի դեկտեմբերի 30-ի N 01-38 / 5875 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի` << ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ի դեմս Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունք պետի առաջադրանքով կատարել << Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների 2/2 հասցեում գտնվող, ծառայության սեփականությունը հանդիսացող տարածքի գազասպառման համակարգում գազի անվտանգության սարքի և կափույրի տեղադրման աշխատանքները այսուհետ Աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2. Աշխատանքը կամ դրա մասը համարվում է կատարված Պատվիրատուի լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքի կատարման ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. Աշխատանքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուից պահանջել 5 (հինգ) օրյա ժամկետում անհատույց վերացնել դրանք և հատուցել Պատվիրատուին դրանով հասցված վնասները,

2.1.3. Աշխատանքն ընդունելուց հետո 5 օրվա ժամկետի ընթացքում Պատվիրատուի աշխատողների կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը,

2.1.4. մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց Կապալառուին վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց Պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած Աշխատանքին համարժեք գին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է

2.2.1. պայմանավորված գինը Կապալառուին վճարել Պայմանագիրը կնքելուց հետո 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում, պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և պայմանավորված ժամկետում կամ ժամկետից շուտ` Պատվիրատուի համաձայնությամբ,

2.2.2. Աշխատանքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Կապալառուին:

2.3. Կապալառուն պարտավոր է

2.3.1. Աշխատանքը կատարել Պայմանագրի 4.1.կետով սահմանված ժամկետներում,

2.3.2. Աշխատանքը կատարել առաջադրանքին, նորմատիվ իրավական ակտերի պահանջներին և Պայմանագրին համապատասխան, պատշաճ որակով, իր ուժերով, նյութերով, սարքերով, բացառությամբ այն դեպքերի, երբ նյութերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից,

2.3.3. Աշխատանքը հանձնելուց հետո, երաշխիքային ժամկետում՝ 10 (տասը) տարվա ընթացքում տարվա ընթացքում, Պատվիրատուի պահանջով 10-օրյա ժամկետում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները,

2.3.4. Աշխատանքի արդյունքը հանձնելու հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկատվություն հաղորդել Պայմանագրի առարկայի շահագործման կամ այլ օգտագործման վերաբերյալ, եթե տեղեկատվության բնույթն այնպիսին է, որ առանց դրա անհնար է Աշխատանքի արդյունքն օգտագործել Պայմանագրում նշված նպատակների համար:

2.4. Կապալառուն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուի կողմից << օրենսդրությամբ և/կամ Պայմանագրով սահմանված իր պարտականությունները չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքը կատարելուց,

2.4.2. Պատվիրատուի համաձայնությամբ Աշխատանքը ավարտել Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ:

3.Աշխատանքի գինը և վարձատրության կարգը

3.1. Պայմանագրով կատարման ենթակա Աշխատանքի գինը սահմանվում է 46147 (քառասունվեց հազար հարյուր քառասունյոթ) << դրամ, ներառյալ ԱԱՀ:

3.2. Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումները կատարում է անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ:

3.3. Պատվիրատուն պարտավորվում է Աշխատանքի համար Կապալառուին վճարել կանխավճար պայմանագիրը կնքելուց հետո 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում մինչև աշխատանքները սկսելը:

4. Աշխատանքը կատարելու ժամկետները

4.1. Աշխատանքը կատարելու սկզբնական ժամկետն է 03 հուլիսի 2020թ., իսկ վերջնական ժամկետը 31 օգոստոսի 2020թ.:

Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքը կատարելու ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական ժամկետների խախտման համար:

4.2. Պայմանագրի 4.1. կետում նշված Աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները կարող են փոփոխվել Պայմանագրում նախատեսված դեպքերում ու կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Աշխատանքի կատարման ժամկետի(ների) խախտման համար Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կապալառուից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Աշխատանքի գնի 0,1%-ի չափով:

5.2. Պատվիրատուի կողմից պայմանավորված գինը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կապալառուն իրավունք ունի պահանջել Պատվիրատուից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Աշխատանքի գնի 0,1%-ի չափով:

5.3. Պայմանագրով իրենց պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Վեճերի լուծման կարգը

6.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով

6.2. Պայմանագրի 6.1. կետի պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պարտականությունների պատշաճ կատարմամբ:

7.2. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են << օրենսդրությամբ:

7.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	*Կապալառու՝*
<< ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունք	*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ*
<< ՖՆ գործառնական վարչություն	*ք. Կապան Գործարանային 16*
Հ/Հ 900011288025	*«Արդշինբանկ» ՓԲԸ, «Կապան» մ/ճ*
ՀՎՀՀ 01223338	*Հ/Հ 2470802008650000*
	ՀՎՀՀ 00046317
Բաժանմունքի պետ՝ Ա. Զաքարյան	*Տնօրեն Վ. Հակոբյան*

Պատվիրատու

ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող
ծառայության Սյունիքի մարզային բաժնի
Կապան-Մեղրի բաժանմունք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338
Բաժանմունքի
պետ Ա. Զաքարյան

Կապալառու

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ
Սյունիքի ԳԳՄ
ք. Կապան, Գործարանային 16
<<Արդշինբ[illegible] Կապան,, մ/ճ
Հ/Հ 2470800403860000
ՀՎՀՀ 0004631[illegible]
Տնօրեն [illegible]ակոբյան

Կատարողական ակտ

Պայմանագիր 39 /20   03.07.2020թ.

06. 07. 2020թ.

Հիմնարկ ձեռնարկությունների գազապառման համակարգում վթարային անջատիչ կափույրների և այրվող գազերի ազդանշանային սարքի տեղադրման

Կապան քաղաքի Երկաթուղայինների 2 / 2 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի բաժանմունքի տարածք

1 հատ

Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Գինը (դրամ)	Քանակը	Ընդ.արժեքը դրամ
1	Գազի ազդանշանային սարք	հատ	17,585	1	17585
2	Վթարային անջատիչ կափույր 3/4 արտաքին	հատ	5.521	1	5521
3	Կցաշուրթ 3/4	հատ	400	2	800
4	Ագուցամանեկ 3/4	հատ	375	2	750
5	Տափօղակ 3/4	հատ	140	2	280
6	Միջադիր 3/4	հատ	107	2	214
7	Հաղորդալար պղնձյա 2x0.75մմ	մ	77	5	383
8	Անցում արտաքին պարուրակով 3/4-3/4	հատ	955	2	1910
9	Խողովակ ճկուն մետաղական 3/4	մ	1,771	0.10	177
10	Ժապավեն մեկուսիչ15մմ*10մ	հատ	150	1	150
11	Ընդամենը լրակազմողների արժեքը				27771
12	Բրիգադի աշխատավարձը				1908
13	Մեքենա-մեխանիզմների շահագործում				400
14	Տրանսպորտային ծախսեր				500
15	*Ընդամենը*				*30578*
	Վերադիր ծախսեր 13.3%				4067
	Ընդամենը				34645
	Շահույթ 11%				3811
	Ընդամենը				38456
	ԱԱՀ 20%				7691
	Ը ն դ ա մ ե ն ը				*46147*

Հանձնեց
ԿԿԾ պետ

Ա. Ուստաբաշյան

Ընդունեց

Ա. Զաքարյան